## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

N Ե 460/19
25 հունիսի 2019թ.

«ԼԱՃ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Տ. ԼԱՃԻԿՅԱՆԻՆ

### ԾԱՆՈՒՑՈՒՄ

2019 թվականի մայիսի 03-ին թիվ ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Լաճիկյան

Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի և «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի մայիսի 03-ին կնքված N ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը պայմանագիր կնքելու օրվանից 21 օրվա ընթացքում պետք է մատակարարեր (ZIL MMZ-554M) մակնիշի ինքնաթափ բեռնատար, ինչը պայմանագրով սահմանված ժամկետում չի կատարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի ա) ենթակետի համաձայն՝ գնո րդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ա) կետի համաձայն մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում:

2019 թվականի հունիսի 21-ին ներկայացվել է անպատշաճ որակի ապրանք:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, հիմք ընդունելով ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման պայմանագրի

2.1.7 կետի պահանջները Բյուրեղավանի համայնքապետարանը 2019 թվականի հունիսի 25-ին միակողմանի լուծում է ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն պարտավոր սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Բյուրեղավանի համայնքապետարանի գնածապետական «900102407070» հաշվեհամարին փոխանցել գանձման ենթակա 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10%):

Կից ներկայացվում է բացասական եզրակացության պատճենը:

Առդիր՝ 1 (մեկ) թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

Կատ.՝ Վ. Մարտիրոսյան
հեռ. (0222) 65203